

9469

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ  
ՐԱ ԿՈՆԳՐԵՍԸ

ՅԱՀ  
Վ-26

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՐՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿ.  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ., ՄՈՍԿՎԱ, 1929

L 1 DEC 2009

25 SEP 2008


Բ. ՎԱՍԻԼԵՎԱ

## ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱԳԻՈՆԱԼԻ

# ՎԻ ԿՈՆԳՐԵՍԸ

三  
四

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ, 1929



08 AUG 2013

9469

ԿՈՄԻՏԵՐՆԻ VI ԿՈՆԳՐԵՍԻ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԿՈՆԳՐԵՍԻ ԿԱԶՄԸ

ԿՈՒՐՈՒՇԽՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՄԻԶԱՋԻՑԻ  
ԿԱԶՄԻՐԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Կոմինտերնի VI կոնգրեսը միջազգային եր վոչ  
միայն ձևականապես, վոչ միայն այն պատճառով, վոր  
նրա աշխատանքներին մասնակցելու համար հրավիր-  
ված եյին բոլոր յերկրների կոմունիստական կուսակ-  
ցության ներկայացուցիչները, այլ և այն պատճառով,  
վոր նրա նիստերին իրաք ներկա եյին գտնվում Յեկ-  
րոպայի, Ամերիկայի բոլոր յերկրների ու հեռավոր  
Արևելյան գաղութների և կիսազարդութների ներկայա-  
ցուցիչները։ Կոմինտերնը իր VI կոնգրեսի շեմքին  
իր կազմակերպությունների ցանցով պատել ե ամբողջ  
յերկրագունդը։

ՅԵՐԿՐՈՐԴ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ  
ՄԻԶԱՋԻՑԻ ԿԱԶՄԻՐԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԶԵ

Կոմինտերնի VI կոնգրեսի հետ մշաժամանակ  
տեղի ունեցին Սոցիալիստական ինտերնացիոնալի հեր-  
թական կոնգրեսի նիստերը (Բրյուսելում)։ Վերջինս  
թեև նույնպես կոչվում է միջազգային կոնգրես, բայց



531-54

փաստորեն նաև Արևմտյան Յեվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի սոցիալիստական կուսակցությունների կոնգրեսն եր: Լատինական Ամերիկան և առհասարակ գաղութային ու կիսազարութային յերկրները չելին ներկայացված Բրյուսելի կոնգրեսին: Յերկրորդ Ինտերնացիոնալի Գործկոմի հաշվետվության մեջ (վորհրատարակված եր Բրյուսելի կոնգրեսի նախորեյին) զետեղված ե ցանկը այն կուսակցությունների, վորոնք հարում են Սոցիալիստական Ինտերնացիոնալին: Այդ ցանկի մեջ գաղութային և կիսազարութային յերկրներից կան միայն յերկու կուսակցություն՝ Արգենտինայի և Չինաստանի: Արգենտինայում (կիսազարութ) խկապես գոյություն ունի փոքրիկ և նվազազդեցություն ունեցող Սոցիալիստական կուսակցություն: Իսկ ինչ վերաբերում է Չինաստանին — Յերկրորդ Ինտերնացիոնալի հաշվետվությունը վոչ մի տեղեկություն չի տալիս այդ կուսակցության մասին: Հիշատակվում ե միայն հասցեն վոմն Վան-Կինի, վորը ապրում է Պարիզի մոտ, իսկ Պարիզն, ինչպես հայտնի յե, գտնվում է վոչ Չինաստանում: Բուն Չինաստանի մեջ վոչ վոչինչ չփառե չինական սոցիալիստական կուսակցության մասին: Այդպիսի առասպել ե հանդիսանում նաև ԽՍՀՄ ներկայացուցչությունը Յերկրորդ Ինտերնացիոնալի կազմի մեջ: Յերկրորդ Ինտերնացիոնալի Գործկոմի հաշվետվությունը հաղորդում ե, վոր ԽՍՀՄ առաջնորդում է այդ կուսակցությունը հաղորդում և, վոր կոնգրեսի վերջում յեկավ Մադագասկար կղզու ներկայացուցիչը և վոր պատգամագորները, վոտքի յելած, աղմկալից ծափահարություններով վողջունեցին այդ հեռավոր յերկրի ներկայացուցչին: Սակայն գաղութների այդ միակ ներկայացուցիչը փաստորեն դուրս յեկավ վոր ֆրանսիական չինովնիկ Ստեֆանին եր, վորը յեկել եր Սոցիալիստական Ինտերնացիոնալին «սրտանց» շնորհակալություն հայտնելու այն բանի համար, վոր վերջինս,

չեղ. կուսակցություն, վրացական, հայկական և ուկրայինական սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ: Ինչպես չինական սոցիալիստական կուսակցության, նույնպես և այդ կուսակցությունների գործնեյության մասին, վոչինչ չի հաղորդում հաշվետվությունը: Այդ ևս միանգամայն բնական ե, քանի վոր վոչինչ չի կարելի ասել գոյություն չունեցող կազմակերպությունների գործնեյության մասին: Ուռասական զանազան սոցիալիստական կուսակցությունների կողմից Բրյուսելի կոնգրեսում գտնվող ներկայացուցիչները, ամեն տեսակ Դաները, Չերնովները և նման եմբարանատները, լավագույն դեպքում ներկայացնում ելին փոքրիկ, իդեյալիս և կազմակերպչորեն մեռած եմիզրանտական խմբակներ:

ԵԵՐԿՐՈՐԴ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՄԵՋ ԳԱՂՈՒԹԱՑԻՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԶԿԱՆ

Բրյուսելի սոցիալիստական կոնգրեսի հաշվետվությունը հաղորդում է, վոր կոնգրեսի վերջում յեկավ Մադագասկար կղզու ներկայացուցիչը և վոր պատգամագորները, վոտքի յելած, աղմկալից ծափահարություններով վողջունեցին այդ հեռավոր յերկրի ներկայացուցչին: Սակայն գաղութների այդ միակ ներկայացուցիչը փաստորեն դուրս յեկավ վոր ֆրանսիական չինովնիկ Ստեֆանին եր, վորը յեկել եր Սոցիալիստական Ինտերնացիոնալին «սրտանց» շնորհակալություն հայտնելու այն բանի համար, վոր վերջինս,

ակառակ կոմունիստների, «չի պահանջում, վոր գաղութներից թողնենք հեռանանք, այլ գտնում ե, վոր գաղութները պետք ե մնան «կուլտուրական ազգերի» «լուսավոր» ղեկավարության ներքո»:

Վորքան ավելի մանրամասն ենք քննում Մոսկայի և Բրյուսելի կոնգրեսների կազմը, այնքան ավելի ցայտուն ե դրսեորդում այն հսկայական տարբերությունը, վոր կա այդ յերկու միջազգային կազմակերպությունների միջև:

ՅԵՐԿՐՈՐԴ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ՅԵՎ. ՀԱԿՈԶԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱԶԻՐԱԿԵՐՊՈԽԹՅՈՒՆ Ե

Կոմինտերնի VI կոնգրեսին մասնակցող 58 կուսակցություններից ճնշող մեծամասնությունը պատկանում է միանդամայն անլեզակ կուսակցություններին, վորոնց գաղանորեն հետապնդում են բուրժուական կառավարությունները: Մյուս կոմուկուսները թեև ղեռես լեզակ գոյություն ունեն, վերջերս հալածվում են ու ստիպված կինեն անցնել հեղափոխական պողպոյլ աշխատանքի: Ինքնին հասկանալի յե, վոր Կոմինտերնի VI կոնգրեսի 575 պատգամավորների միջև չկար մեկը, վոր այս կամ այն կերպ կապված լիներ բուրժուական կառավարությունների հետ: Իսկ Յերկրորդ Ինտերնացիոնալի Բրյուսելի կոնգրեսում, ընդհակառակը, 446 պատգամավորներից 60-ը պատկանում եյին բուրժուական կառավարությունների նախկին և ներկա մինիստրների թվին: Բրյու-

սելի կոնգրեսին մասնակցող կուսակցությունների մեջ կային այնպիսիները, ինչպես են բոլգարական սոցիալիստական կուսակցությունը, վորը պաշտոնապես պաշտպանում ե Յանկովի դահիճային ռեժիմը, լեհական սոց. կուսակցությունը (III Հայոց կուսակցություն), վորը գնդակակոծում ե բանվորական հեղափոխական գեմոնստրացիաները և գործակցում Պիլսուդսկու ֆաշիստական կառավարության ախրանկաններին, իսպանական սոց. կուսակցությունը, վորը իր վերջին համագումարին (տեղի ունեցավ Յերկրորդ Ինտերնացիոնալի Գործկոմի ներկայացուցչի նախագահությամբ) վորոշեց գործով պաշտպանել Պրիմո-Ռի-Ռիվերայի կառավարությունը, Վենգրիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, վորը գրավոր պայմանագրով կապված ե Խորտիի ֆաշիստական կառավարության հետ: Ճիշտ ե, Բրյուսելում կային նաև անլեզակ կուսակցությունների ներկայացուցիչներ, սակայն այդ «անլեզակ» կուսակցությունները ԽՍՀՄ «կուսակցություններն» են, վորոնք գոյություն ունին Յերկրորդ Ինտերնացիոնալի քարտուղարության գրավոր հաշվետվությունների մեջ միայն: և այդ «կուսակցությունների» ներկայացուցիչները, վորոնք մասնակցում եյին Բրյուսելի կոնգրեսի աշխատանքներին, անլեզակ են հանդիսանում միայն ԽՍՀՄ նկատմամբ, վորի դեմ նրանք մասնակցել են (և մասնակցում են) մի շարք հականական կառավարական դավադրությունների մեջ՝ ցարական և իմպերիալիստական միջազգային սև ուսակցիայի հետ

դաշն կնքած. բուրժուական կառավարությունները, ինարկե, հյուրընկալում են և ամեն աջակցություն ցույց են տալիս այդ նույնպես «սոցիալիստներին»:

### ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՎԼ ԿՈՆԳՐԵՍԻ ԿՈԼԱՅԿՏԻՎ. ԱՇԽԱՏԱՆՔԻ

Կոմինտերնի ՎԼ կոնգրեսի աշխատանքները տևեցին  $1\frac{1}{2}$  ամիս, իսկ Յերկորդ Խոտերնացիոնալի Բրյուսելի կոնգրեսի աշխատանքները — մեկ շաբաթ։ Այդ տարբերությունն ևս պատահական չէ։ Կոմինտերնի ՎԼ կոնգրեսի աշխատանքների հիմնական մեթոդն եր՝ բազմակողմանիորեն կոլեկտիվ քննության առնել բոլոր պրոբլեմները՝ ամենախիստ ինքնաքննադատության հիման վրա։ Միջին հաշվով, ամեն մի հարցի շուրջը կոմինտերնի կոնգրեսում արտահայտվեցին 100 ճառախոս։ Ծրագիրը մշակող կոմիսիայում արտահայտվեցին ավելի քան 200 ճառախոս և ներկայացվեցին ավելի քան 600 գրավոր ուղղումներ, վորոնք բոլորը յենթարկվեցին մանրամասն քննության։

### ԲՐՅՈՒՄԵԼԻ ՍՈՅԻՍԼԻՄՍԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԽՍՀՏԱՌԱԿ «ԳԱՂՏՆԻՑՆԵՐԸ»

Բրյուսելի կոնգրեսում, վորպես կանոն, վիճաբանություններ տեղի չունեցան։ Յեղան գեկուցումներ, ըստ վորում գեկուցանում եյին կամ բուրժուական կառավարությունների մինիստրները, կամ դրանց նմանները (որինակ, գաղութային հարցի մասին գեկուցեց, վորպես «սպեց», լորդ Ոլիվեն, Յամայկա

կղզու նախկին նահանգապետը և նորին մեծության անգլիական թագավորի կառավարության՝ Հնդկաստանի գործերի ստատուսեկրետարը, զինվորական հարցի մասին գեկուցողների թվումն եր վոմն Նաֆտալի, «Ֆրանկ-ֆուրտեր Յայտունգի»՝ խոշոր բուրժուազիայի որդաններից մեկի՝ խմբագիրներից մինը, և այլն։ Զեկուցումներից հետո կամ առանց վիճաբանությունների ընդունվում եյին բանաձևեր և կամ կազմվում եյին դադարնի կոմիսիաներ։ Բրյուսելի կոնգրեսի պատգամավորների այսպիսի լուակյացությունը բացարձակվում ե վոչ թե նրանով, վոր նրանք (պատգամավորների կեսը աղվոկատներ եյին, պարլամենտական գործիչներ — ճառամարզությունների սպեցներ ու սիրահարներ) ասելու վոչինչ չունեյին։ Ընդհակառակը, ինչպես յերեսում ե զինվորական գաղտնի կոմիսիաների հաշվետվություններից (վորը հրատարակել ե «Կարմիր Դրոշակ» կոմունիստական թերթը), Բրյուսելի կոնգրեսի պատգամավորների համար շատ վիճելի հարցեր կային, բայց այդ վիճելի հարցերը միանգամայն այլ բնույթունեյին։ Որինակ, լեհական սոց. կուսակցության պատգամավորը պնդում եր, վոր Լեհաստանի բանվորներն ու գյուղացիները գեմ են զինաթափման, և այդ պատճառով ել լեհաստանի համար միանգամայն անընդունելի յե զինաթափման լոգունգը։ Ֆրանսիական սոց. կուսակցության պատգամավորները հայտարարեցին, վոր իրենք չեն կարող համաձայնվել գերմանական սոց.-դեմ., կուսակցության առաջարկությանը՝ Ռայնի

շրջանից անմիջապես եվակուացիա անելու մասին, վորովհետև քաղաքական նման յելույթը նրանց կվարկաբեկեր ֆրանսիական հայրենասիրական հասարակական կարծիքի առաջ:

ԲՐՅՈՒԽԵԼԻ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԸ  
ԱԶԳԵՐԻ ԼԻԴԱՅԻ ՄԵԽԱՅԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆ Ե

Ինչպես պարզ ե վերոնիշյալ որինակներից, Բրյուսելի կոնգրեսին ներկայացված յուրաքանչյուր սոցիալիստական կուսակցություն խղճի մտոք եր ներկայացնում ու պաշտպանում «իր» բուրժուական կառավարության շահերը: Իհարկե, նման բաների մասին, նախ՝ անհարմար եր հրապարակով խոսել, յերկրորդ՝ ամեն մեկին չե, փոր կարելի յե վստահել այնպիսի դելիկատ բան, ինչպիսին ե բուրժուական արտաքին գործոց մինիստրությունների տեսակետների ուղիղ շարադրությունը: Այսպիսով, Բրյուսելի կոնգրեսում ճառում ելին բուրժուական կառավարությունների հավատարմատատները միայն, իսկ անտեղյակները լուսում ելին, դրանով ցույց տալով իրենց իբր թե համամիտությունը:

ԿՈՐԻՆՏԵՐՆԻ VI ԿՈՆԳՐԵՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՏԵՂԻ  
ՈՒՆԵՑԱՆ ԻՆՔՆԱՅՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԻ ՏԱԿ

Կոմինտերնի կոնգրեսի պատգամավորները յերեք շահագրգուված չելին այն բանում, վորպեսզի կոծկեն, և մանավանդ պաշտպանեն, իրենց իշխող դասակար-

գերի քաղաքականությունը և պլանները: Նրանք յեկել ելին կոնգրես նրա համար, վորպեսզի մերկացնեն ամբողջ աշխարհի առաջ, բոլոր բանվորների ու գյուղացիների առաջ մերկացնեն բուրժուական կառավարությունների ու նրանց սոց.-գեմ. ագենտների շահագրգության պլաններն ու գինվորական ավանդյուրանները: Կոմինտերնի կոնգրեսի պատգամավորների մյուս խողիքն եր — ստուգել կոմկուսների պարզարը բուրժուական կառավարությունների գեմ, պարզել պատճառները կրած պարտությունների և այն դժվարությունների, վոր տեղի ունեն կոմկուսների աղղեցությունը պրոլետարական մասաների և զյուղացիության վրա տարածելու խողը: Այդպիսով կոմինտերնի կոնգրեսը, սոցիալիստական կոնգրեսին միանգամայն հակառակ, ամբողջովին անցավ ամենավճռական ինքնաքննադատության և կապիտալիստական աշխարհը ամենաանխնա քննադատելու նշանի տակ:

## ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԾՐԱԳԻՐԸ — VI ԿՈՆԳՐԵՍԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՐՑԸ

ԿՈՐԻՆՏԵՐՆԻ ԾՐԱԳԻՐԸ — ԻՐՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԽՈՐՏԱԿԵԼՈՒ ՀԱՐԱՐԸ ՄՊԱՐԸ ՀԵՂՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅԳԱՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Կոմունիստական և սոցիալիստական Ինտերնացիոնալների անհաջակելի հակադրության ավելի պայծառ արտահայտությունը տեղ գտավ թե մեկ և թե մյուս կազմակերպության ծրագրներում: «Թայմսը» (ան-

գլխական բուրժուական լրագիր), վորը պատկանում է Կոմունիստական Խնտերնացիոնալի ավելի խելոք ու անհնա թշնամիների թվին, իր՝ հուլիս 1 (1928 թ.) համարում, բնութագրելով Կոմինտերնի ծրագրի սկզբանական պրոյեկտը, հայտնում ե, վոր «այդ պրոյեկտը բացատրում ե այն ստրատեգիան ու տակտիկան, վոր անհրաժեշտ ե Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների համաշխարհային միություն կազմելու համար»։ Դա — թշնամական, սակայն միանգամայն ուղիղ բնորոշումն ե Կոմունիստական Խնտերնացիոնալի ծրագրի եյության։ Կոմինտերնի ծրագրը իրեն նպատակ ե դնում ամեն կերպ աջակցել հեղափոխական կրիզիսի արագացմանը։ «Երբ իշխող դասակարգերը կազմալուծված են, յերբ մասսաները զըսնվում են հեղափոխական բորբոքման վիճակում, պրոլետարիատի կուսակցության առաջ ինդիր ե դրվում՝ նրանց առաջնորդել ուղղակի գրոհ տալու բուրժուական պետության վրա։ Դրան կարելի յե հասնել՝ հետզհետե սրվող անցողական լողունգների (խորհուրդների լողունգ, բանվորական կոնտրոլի [արտադրության վրա] լողունգ, գյուղացիական կոմինտերնի [կալվածատերերի հողերը գրավելու համար] լողունգ, բուրժուազիայի զինաթափակման և պրոլետարիատի զինման լողունգ) պրոպագանդի և մասսայական յելույթներ կազմակերպելու միջոցով... Այդ մասսայական յելույթների թվումն են — գործադրուները, գործադրուների և դեմոնստրացիաների գուգորդումը, գոր-

ծաղուների և զինված դեմոնստրացիաների գուգորդումը, վերջապես, գլխավոր գործադրություն՝ բուրժուազիայի պետական խշանության գեմ ուղղած զինված ապստամբության հետ միասին։ Պայքարի վերջին բարձրագույն ձևը հենվում է զինվորական արվեստի կանոնների վրա։ Պետք ե ունենալ սեփական ուազմական պլան, մարտական ոպերացիաները պետք ե կրեն գրոհ տալու բնույթ ու դրսերեն պրոլետարիատի անսահման նվիրվածություն ու հերոսականություն»։

Ծրագրի շուրջը տեղի ունեցած վիճաբանությունները ել ավելի խորացրին ու սրեցին նրա այդ մարտական բնույթը։ Որինակ, ավելացվեց մի հատուկ կետ՝ «հեղափոխական սիտուացիայի զարգացման մեջ կուլմինացիոն պունկալը չողտագործելու մասին, յերբ պրոլետարիատի կուսակցությունից պահանջվում է համարձակ ու վճռական արշավանք գործել թշնամությա։ Ծրագիրը ընդգծում ե, վոր «ձեռքից բաց թողնել այդպիսի պարագան և ապատամբություն չսկսել — կնշանակե նախաձեռնությունը հանձնել հակառակորդին և հեղափոխությունը մատնել պարտության»։

Այն հանգամանքը, վոր Կոմինտերնի VI կոնգրեսը միաձայն հաստատեց բոլոր կոմկուսակցությունների համար ընդհանուր և պարտադիր ծրագիր, — բուրժուազիային և իմպերիալիզմի հեղափոխական տապալման ծրագիր, — այդ հանգամանքը հանդիսանում ե պատմական հակայական նշանակություն ունեցող մի փաստ։ Դա նշանակում ե, վոր բանվոր դասակարգը համաշ-

խարհային մասշտաբով (և խակապես՝ համար հային մասշտաբով) գիտակցության եւ յեկել: Իմպերիալիզմը ստեղծել եւ համաշխարհային պրոլետարական հեղափոխական ոբյեկտիվ նախադրյալներ: Կոմինտերնի VI կոնգրեսը ավարտեց ուսւըյեկտիվ նախադրյալների իդեյական և կազմակերպչական ձևավորման պրոցեսը, այսինքն համաշխարհային հեղափոխական պրոլետարիատի կազմակերպչական պրոցեսը՝ վճռական կոիմների համար՝ ի նպաստ համաշխարհային Խորհրդային հանրապետության: VI կոնգրեսը այդ կոիմներին վերաբերյալ հարցը դրեց բանվոր դասակարգի մոտակա անելքների որակարգի մեջ:

ՍՈՅԻՍԼԻՄՏԱԿԱՆ ԿՈԽԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ  
ԿԱՊԻՏԱԼԻՏԻՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ Ե

Սոցիալիստական Ինտերնացիոնալը բոլոր յերկրների համար ընդհանուր մի ծրագիր չունի: Մինչև այսոր ել նա մնացել եւ նույնը, ինչ վոր եր 1914 թվին, իմպերիալիստական պատերազմի սկզբին, յերբ նա բուրժուական շահերի տարածայնության հետևանքով պառակտվեց, — ամեն մի սոցիալիստական կուսակցություն շնչում ե իր բուրժուազիայի շնչով, ապրում ե նրա ուրախություններով, վշտով ու զայրույթով, նրա թշնամականությամբ՝ դեպի ուրիշ յերկրների մրցող բուրժուազիան, նրա պայքարով՝ ընդդեմ հեղափոխական բանվորական շարժման, ընդդեմ կոմունիզմի: 1914 թվից հետո սոցիալիստական կուսակցություն-

ներից յուրաքանչյուրն իր յերկրում շարունակ դաշտանել ե պրոլետարիատի շահերին և ներկայումս դարձել ե իմպերիալիստական բուրժուազիայի ամենաստոր կամակատարը: Վոր այդ այդպես ե — այդ մասին կարելի յե կարդալ բոլոր սոցիալիստական կուսակցությունների ծրագրներում: Որինակ, զերմանական սոց-դեմոկրատների նոր ծրագրի մեջ վոչինչ չի ասվում վոչ միայն պրոլետարիատի դիկտատուրայի մասին, այլ և նույնիսկ հեղափոխության մասին ընդհանրապես: Շատ բնորոշ ե, վոր յերբ սոցիալ-դեմոկրատական կուսակցության Հայդլերգի համագումարում այդ ծրագրի քննության ժամանակ համագումարի «Ճախ» պատգամավոր Պ. Լեվին այդ առթիվ իր տարակուսանքն ու համաձայնությունը հայտնեց, զեկուցող Հիլֆենդինը բացատրեց, վոր Լեվիի ցուցմունքը ճիշտ չե, քանի վոր ամենքին հայտնի յե, վոր աշխարհումն ամենամեծ հեղափոխականը հանդիսանում ե կապիտալիզմը, իսկ կապիտալիզմի մասին ծրագրի պրոյեկտում շատ ե խոսվում, հետևապես՝ այնտեղ շատ ե ասված նաև հեղափոխության մասին: Պ. Լեվին հետո քվեարկեց հոգուտ այն ծրագրի, վորի մեջ կար կապիտալիզմ, բայց վոչ հեղափոխություն: Լեվին յերեկ յելակետ ուներ այն, վոր կապիտալիզմը և հեղափոխությունը միենույն բաներն են:

Ուրիշ որինակ, անդիմական բանվորական կուսակցությունը, մտնելով II Ինտերնացիոնալի կազմի մեջ, այսպես ե բնորոշում իր ըմբռնումը սոցիալիզմի մա-

սին. «Սոցիալիզմը չի հանդիսանում վոչ անհնարին ուտոպիայի սենտիմենտալ ցանկություն, վոչ ել կույր խռովարար շարժում ընդդեմ աղքատության ու ճնշման։ Սոցիալիզմը գործնական ձանաչումն ե ընդհանուրի կողմից ճանաչված այն ընդհանուր մտքի, թե բարոյականությունը կայանում ե իրերի բնության մեջ, և վոր բոլոր մարդիկ կակապես կապված են միմյանց հետ»։

«Բարոյականության» «ընդհանուրի կողմից ճառաշխված ընդհանուր մտքի» մասին արտահայտված այդ ստոր հիմարաբանության ծածկույթի տակ թագնված ե կապիտալիզմի նույն այն պաշտպանությունը, վորի իդեյան շարադրված ե հաղլբերգյան ծրագրում:

Այդպիսով, Կոմինտերնի ծրագիրը — ծրագիր Ե՛  
լնդգեմ կազիտալիգմի և հոգուտ պրոլետարիատի դիկ-  
տատուրայի համար մղվող հեղափոխական պայքարի,  
հոգուտ կոմունիզմի հաղթանակի: Սոցիալիստական Ին-  
տերնացիոնալի կուսակցությունների ծրագրները կա-  
պիտավորական հասարակության շինարարության  
ծրագրներ են:

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԴՐԱ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ


ԿՈՐԻՆՏԵՐՆԻ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոմունիստական խնտերնացիոնալի ծրագիրը սկըսվում է ներածությամբ։ Ներածությունը ընդդժում է, վոր կոմինտերնը իր պրակտիկայում և թեորիայում անպայման կանգնած է դիալեկտիկական մատերիա-

լիզմի, մարքսիզմի և լենինիզմի տեսակետի վրա։ Ներածությունը սկզբում կարճ և սեղմ ձևակերպումներով տալիս են ներկա եպոխայի՝ վորաբես իմպերիալիզմի եպօխայի՝ բնութագիրը։ Ծբագիրը ասում են, վոր «իմպերիալիզմի եպօխան — մեռնող կասմալիզմի եպօխան ե», վորովհետև իմպերիալիզմը «տարերային ուժով դրսեորում ու խորացնում են կապիտալիստական հասարակության բոլոր հակասությունները, ծայր աստիճանի յեն հասցնում զասակաբացին ճնշումը..., համաշխարհային մասշտաբով ծագեցնում անխուսափելիություն իմպերիալիստական պատերազմերի, վորոնք խախտում են իշխող հարաբերությունների ամբողջ սխտեմը, և յերկաթե անհրաժեշտությամբ տանում են դեպի պրոլետարիատի համաշխարհային հեղափոխությունը։ Այնուհետև ներածությունը խոսում է այս մասին, թե ինչպես իմպերիալիզմը, կաշառելով պրոլետարիատի վերին խավերին, Սոցիալիստական ինտերնացիոնալը դարձրել են բուրժուական-բանվորական կուսակցություններ, վորոնք նվիրված են «իրենց» բուրժուազիային և «իրենց» իմպերիալիստական պետությանը։ Այդ պայմաններում, — ասում են ներածությունը, — «միջազգային պրոլետարիատը իր պատմական միստիան — իմպերիալիզմի լծի կործանումը և պրոլետարական դիկտատուրայի նվաճումը — կարող են կատարել՝ միմիայն անխնա պայքարելով ընդդեմ սոց.-դեմոկրատիայի, խակ ու պաշտպանական հեղափոխության ուժերի կազմակերպումը այդ իմպետական

2-231

531-54



հնարավոր ե միայն կոմունիզմի պլատֆորմի վրա», III կոմունիստական ինտերնացիոնալի պլատֆորմի վրա:

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԻՄՏԵՄԸ, ՆԲԸ. ԶԱՐ-  
ԳԱՅՈՒՄԸ, ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Կոմինտերնի ծրագրի առաջին հատվածը բնութագրում է կապիտալիզմի համաշխարհային սփառեմը, նրա զարգացումը և անխուսափելի կործանումը։ Հատվածը սկսվում է կապիտալիստական հասարակության և նրա զարգացման ներքին որենքների բնութագրությունով, վորոնք (որենքները) XX դարի սկզբին հասցըին նրան, վոր արդյունաբերական կապիտալիզմի շրջանը, զարգանալով վերածվեց իմպերիալիզմի շրջանի։ Ծրագրը բացատրում է, վոր իմպերիալիզմի շրջանում կապիտալիզմի հակասությունները ծայր աստիճանի սրվում են։ Արդյունաբերական կապիտալիզմի «ազատ մրցումը» դառնում է ֆինանսական կապիտալի մոնոպոլիա։ «Բարդ մեքենաների, քիմիական պրոցեսների, ելեկտրական եներգիայի աճող կիրառումը... առաջ եր բերում հետագա վաղքը՝ գաղութային գերլաստակի համար և պայքար՝ աշխարհի նոր վերաբաժանման համար»... «Կապիտալիզմի մոնոպոլիստական ձեր ուղեկցվում է իմպերիալիստական անխուսափելի պատերազմներով, վորոնք իրենց ծավալով և իրենց տեխնիկայի բնաջնջման ուժով համաշխարհային պատմության մեջ տեսնված չեն։ Այնուհետև ծրագրը ցույց

ե տալիս, թե ինչպես իմպերիալիզմի պայմաններում ավելանում է պետական ապարատի դերը և ինչպես այդ պայմաններում պրոլետարիատի քիչ թե շատ խոշոր յելույթը վեր ե ածվում պետական իշխանության դեմ ուղղած յելույթի, այսինքն քաղաքական յելույթի։ Ծրագիրը բացատրում է, թե իմպերիալիստական պետությունների բուրժուազիան ինչպես ե ոգտագործում գաղութների շահագործելուց իր ստացած գերվաստակը՝ բանվոր դասակարգի վերին խավերին կաշառելու համար, և թե ինչպես իմպերիալիզմը իր զարգացման ամբողջ ընթացքով միաժամանակ պայմանավորում է հեղափոխական կրիզիսների սրվումը, աղբարային հեղափոխությունը և ճնշված գաղութների բազմամիջինն մասսաների ապատամբությունները։ Այս բոլորը ցույց ե տալիս, վոր իմպերիալիզմը նեխվող ու մեռնող կապիտալիզմ է, կապիտալիզմի վերջին ետապն և և համաշխարհային սոցիալիստական հեղափոխության նախորյակը։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԻԶԾԸ ՑԵՎ. ՀԱՄԱՇԽԱՅԾԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԱՋԻՆ ՖԱԶԸ

Կոմինտերնի ծրագրի յերկրորդ հատվածը մանրամասնորեն կանգ ե առնում կապիտալիզմի ընդհանուր ձևերի վրա և վորոշում է համաշխարհային հեղափոխության առաջին փազը։ Հատվածը պատմական սեղմ ծանոթություն ե տալիս հեղափոխական այն կոփլաների մասին, վոր տեղի ունեցան 1914—1918 թ.թ. ապաջին

իմպերիալիստական պատերազմի հետևանքով, մինչև  
Վենայի ապստամբությունը (1627 թ. հունիս) ներ-  
րառյալ՝ Ծրագիրը մանրամասն թվում եւ այն բոլոր  
ակտերը, վոր վերաբերում են 1917—1922 թ.թ.  
II Ինտերնացիոնալի սոց.-դեմ. կուսակցությունների  
կողմից պրոլետարական հեղափոխության յելույթների  
նկատմամբ կատարված դավաճանություններին։ Այդ  
մի ծանր մեղադրական ակտ ե՝ սիստեմատիկ հակա-  
հեղափոխական քաղաքականության, վոր սոցիալ-դե-  
մոկրատական կուսակցությունները անց են կացնում  
ամեն տեղ, ուր վոր պետք ե լինում պաշտպանել  
իշխող դասակարգերը պրոլետարիատի և գյուղացիու-  
թյան ապստամբված մասսաների զայրույթից։ Բազ-  
մաթիվ փաստերի հիման վրա ծրագիրը սահմանում ե՝  
«վոր II Ինտերնացիոնալի միջազգային բոլոր յերանգի  
սոցիալ-դեմոկրատիան և... Պրոֆմիությունների Ամս-  
տերդամի Միությունը այդպիսով դարձան բուրժու-  
ական հասարակության ռեզերվ, նրա ավելի վստահելի  
թիկունքը»։

Մերկացնելով սոցիալ-դեմոկրատական կուսակցու-  
թյուններին, կոմինտերնի ծրագիրը անալիզի յե յեն-  
թարկում փաշիզմի սոցիալ-քաղաքական եյությունը,  
ապացուցելով, վոր Փաշիզմն հանդիսանում ե միջոց-  
ներից մեկը, վորի ոգնությամբ բուրժուազիան «սոց.-  
դեմոկրատիայի հետ միասին» «բանվորներին ճնշում  
ե կամ քննեցնում նրանց դասակարգային զգոնու-  
թյունը»։

ԿՈՄՊՈՆԵՏՈՒԹՅՈՒՆ ԽՆՏԵՐՆԱՅԻՆ ՎԵՐՉՈՒԱԿԱՆ  
ՆՊԱՏԱԿԸ — ԿՈՄՊՈՆԻԶՄ

Կոմինտերնի III հատվածը նվիրված է Կոմունիս-  
տական ինտերնացիոնալի վերջնական նպատակի վո-  
րոշմանը — համաշխարհային կոմունիզմին։ Հատվածը  
մանրամասնորեն բնութագրում ե գարգացած կոմու-  
նիստական հասարակությունը, վորը կկառուցվի հե-  
տեյալ սկզբունքով — «յուրաքանչյուրից ըստ իր ըն-  
դունակությունների, յուրաքանչյուրին ըստ իր պա-  
հանջների», և բացատրում է կոմունիզմի տարբերու-  
թյունը սոցիալիզմից, վորն հանդիսանում ե կոմու-  
նիզմի առաջին ստադիան, յերբ կոմունիստական հա-  
սարակությունը գեռ նոր ե ծնվում կապիտալիստա-  
կան հասարակությունից, գեռ նոր ե ծնվում ամեն  
տեսակետից — տնտեսապես, բարոյապես, մտավորա-  
պես — պատաժ լինելով հին հասարակության բժերով,  
այն հասարակության, վորի ծոցից նա դուրս ե գալիս։

ԱՆՑՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ ԿՈՎԻՏԱԼԻԶՄԻՑ ԴԵՊԻ ՍՈՑԻԱ-  
ԼԻԶՄ ՅԵՎ. ՊՐՈԼԵՏԱՐԻԱԾԻ ԴԻԿՏՈՆԱՐԻԱՆ

Կոմինտերնի ծրագրի չորրորդ հատվածը կոչվում  
է «անցողական շրջան՝ կապիտալիզմից դեպի սոցիա-  
լիզմ և պրոլետարիատի դիկտուրա»։ Ծրագիրը  
սահմանում ե, վոր կապիտալիստական հասարակու-  
թյունը կոմունիստական հասարակության փոխակեր-  
պելու համար անհրաժեշտ ե պրոլետարիատի դիկտա-

տուրայի ռեժիս: Այդ «անցումը»՝ իմպերիալիզմի համաշխարհային դիկտատուրայից դեպի պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրան՝ ընդդրկում և պրոլետարիատի պայքարի, նրա պարտությունների ու հաղթանակների մի յերկար շրջան. կապիտալիստական հարաբերությունների շարունակվող ընդհանուր կրիզիսի և սոցիալիստական հեղափոխությունների տուրացման շրջան, այսինքն պրոլետարիատի՝ բուրժուազիայի դեմ մղվող քաղաքացիական կոհմների շրջան, ազգային պատերազմների և գաղութային ապստամբությունների շրջան, վորի մեջ միաժամանակ գոյություն ունին կապիտալիստական և սոցիալիստական հասարակական եկոնոմիստական սիստեմներ՝ համաշխարհային տնտեսության ներսում, նրանց «բարի հարաբերությունները» և նրանց զինված պայքարը, մի շրջան, յերբ խորհրդային սոցիալիստական պետությունների միություններ են կազմվում նրանց դեմ, մի շրջան, յերբ նրանք ավելի սերտ են կապվում գաղութային ժողովուրդների հետ և այլն:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՑԵՎ, ՆՐԱ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶԵՎԸ

Ծրագիրը սահմանում է, վոր «պրոլետարական պետական իշխանության ավելի նպաստականարմար ձեզ հանդիսանում է պետության այն նոր տիպը, վորը սկզբունքորեն տարբեր է բուրժուազիան պետությունից... խորհրդային պետության տիպը: Հոգուտ Խոր-

հրդային իշխանության մղվող պայքարը կոմկուսակառությունները պետք է առաջ տանեն բանվորների և գյուղացիների միության բոլոր ուժերով՝ պրոլետարիատի իդեյական և քաղաքական հեգեմոնիայի ներքո: Այդ միությունը հիմք է հանդիսանում պրոլետարիատի դիկտատուրայի համար: Իշխանությունը նվաճելով, հաղթանակող պրոլետարիատը խորտակում է բուրժուական պետության ամբողջ ապարատը և ոգտվում է իր նվաճած իշխանությամբ», վորպես կոմունիստական հեղաշրջման լծակով, այսինքն կապիտալիզմի ստացվածքային հարաբերությունների հեղափոխական փոխակերպման լծակով՝ արտադրության սոցիալիստական ձեր վերաբերմամբ: Ծրագիրը սահմանում է մանրամասն ցանկը հիմնական կոնկրետ խնդիրների (պրոլետարիատի կողմից պետական իշխանությունը գրավելուց հետո անմիջապես, Խորհրդային պետության հետեւյալ որը)՝ արդյունաբերության բնագավառում, տրանսպորտի, կապի, գյուղական տնտեսության բնագավառում, առևտուրի և վարկի, աշխատանքի պաշտպանության, կենցաղի բնագավառում, ազգային և գաղութային հարցերում և, վերջապես, իդեոլոգիական ազգեցության միջոցների (մամուլ, կինո և այլն) նկատմամբ:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՑԵՎ, ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ  
ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԲԿԵԼԸ

Իշխանությունը իր ձեռքը վերցրած պրոլետարիատի այս բոլոր խնդիրները մշակված են խնամքով՝

հաշվի առնելով ԽՍՀՄ ունեցած հարուստ փորձը, Վենգրիայի և Բավարիայի խորհրդային հանրապետությունների փորձը, ինչպես նաև հաշվի յեն առնված գաղութների հեղափոխական շարժումների, մանավանդ չինական հեղափոխության փորձը:

Խնամքով ու մանրամասն են մշակված Խորհրդային Խվանության խնդիրները մասնավորապես դյուղական տնտեսության բնագավառում: Այդ խնդիրների ռա» կետը պահանջում ե «կոնֆիսկացիայի և պղուղետարական ազգայնացման յենթարկել ամբողջ խոշոր հողային սեփականությունը քաղաքում և դյուղում... հետզհետե ազգայնացնելով ամբողջ հողը»: Այդ կետերը բավական վիճաբանություն առաջ բերին կոմինատերնի ՎՇ կոնգրեսի ծրագրային կոմիսիայում: Միշ շարք ընկերներ մատնանշում ենին, վոր այդ կետերը միմյանց հակասում են: Յեթե Խորհրդային Խվանությունը սկզբում ազգայնացնում ե վոչ ամբողջ հողը, այլ միայն խոշոր հողատիրությունը, — ել ինչպես կարող ե արգելվել հողի առեւտուրը, քանի վոր այդ արգելումը յենթադրում ե, վոր հողը հանդիսանում ե պետության սեփականություն: Պատասխանելով այդ հարցերին, ընկ. Բուխարինը ծրագրային կոմիսիայի կողմէց բացատրեց, վոր ծրագրի վերոհիշյալ կետերի մեջ իրոք կա տրամաբանական հակասություն, բայց կոմունիստական ինտերնացիոնալը, կազմելով իր ծրագրը, պետք ե յելակետ ունենա վոչ ֆորմալ տրամաբանության կանոնները, այլ ամենից առաջ պետք ե ղեկա-

վարվի պղուղետարիատի դասակարգային պայքարի շահերով: Պղուղետարիատի պայքարի շահերը, նրա կատարած հեղափոխական ապստամբությունների ամբողջ փորձը և մասնավորապես Խորհրդային հանրապետությունների (ԽՍՀՄ, Վենգրիա և Բավարիա) փորձը ասում են այն մասին, վորպեսզի պղուղետարիատը, իշխանությունը իր ձեռքը վերցնելով, գրյություն ունեցող հողային սեփականության նկատմամբ սկզբում սահմանափակվի միայն խոշոր գույքերը անմիջապես բռնագրավելով և ազգայնացնելով, այն հաշվով, վորպեսզի ի հաշիվ այդ բռնագրավկած և ազգայնացված հողերի, անմիջապես և անվճար բավարարվեն չքավոր և մասամբ միջակ գյուղացիության կարիքները հողային խնդրում: Դա անհրաժեշտ ե նրա համար, վորպեսզի պղուղետարական հեղափոխությունը հենց սկզբից կարողանա հենվել չքավոր գյուղացիության մասսաների վրա և այդպիսով կարողանա նյութական հիմք ստեղծել պղուղետարիատի և գյուղացիության միության համար, վորը պղուղետարական հեղափոխության հաղթանակի և նրա վերջնականապես ամրապնդման համար անհրաժեշտ պայման և հանդիսանում: Ընդհակառակը, մանր սեփականատերերին պատկանած հողերի անմիջական ազգայնացումը վոտքի կբարձրացնե ազգաբնակչության այդ հոծ մասսան ընդգեմ պղուղետարական հեղափոխության: Յեթե այդ այդպես ե, — իսկ դա ցույց ե տալիս և ԽՍՀՄ փորձը, և՝ Վենգրիայի, և՝ Բավարիայի Խորհրդային հանրապետությունների փորձը, —

ապա բնականաբար հարց ե ծագում — ել ի՞նչ կերպ  
մանր ապրանքարտադրողները կառնվեն պլանային  
սոցիալիստական տնտեսության սիստեմի մեջ։ Այդ  
հարցը հանդիսանում ե կենտրոնական և ամենադժ-  
վար հարցերից մեկը՝ կապիտալիզմից գեպի սոցիալիզմ  
անցնելու շրջանում, դա անցողիկ շրջանի ամենա-  
դժվար հարցերից մեկն ե.

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՐԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Կոմինտերնի ծրագիրը այդ հատվածին նվիրում է  
առանձին գլուխ — «Պրոլետարական դիկտատուրայի  
տնտեսական քաղաքականության հիմունքները»։ Այդ  
գլուխում սահմանվում են հետևյալ սկզբունքները, վոր  
բոլոր կոմկուսակցությունները, պրոլետարիատի դիկ-  
տատուրայի խնդիրները իրագործելիս, անհրաժեշտ ե  
վոր ինկատի ունենան։

1) Մասնավոր սեփականության լրիվ վերացումը և  
ամբողջ հողի ազգայնացումը չի կարելի անմիջապես  
կերառել ավելի զարգացած կապիտալիստական յեր-  
կրներում, ուր մասնավոր սեփականության սկզբունքը  
արդեն խորը արմատներ ե գցել գյուղացիության լայն  
խավերի շրջանում։ Այդպիսի յերկրներում ամբողջ հողի  
ազգայնացումը կարելի յե կատարել միայն աստիճա-  
նաբար՝ մի շարք անցողիկ ձեռնարկումների միջոցով։

2) Արտադրության ազգայնացումը չպետք ե, ըստ  
կանոնի, տարածվի մանր և միջակ տնտեսություն-

ների վրա (գյուղացիների, արհեստավորների, տնայ-  
նագործների, մանր ու միջակ առևտրականների, մանր  
արդյունաբերողների և այլն տնտեսությունների վրա)։  
«Ծրագիրը բացատրում ե այդպիսի «ոպորտունիզմի»  
հիմնական պատճառները. — իշխանությունը իր ձեռքը  
վերցրած պրոլետարիատը, մասնավանդ դիկտատուրայի  
առաջին շրջանում, չի ունենալու բավականաչափ կազ-  
մակերպչական ուժ, վորպեսզի վոչ միայն խորատակե  
կապիտալիզմը, այլ և անմիջականորեն կազմակերպե  
մանր ու միջակ անհատական միավորների կապը՝ նոր  
սոցիալիստական հիմքերի վրա։ Այդ մանր անհատա-  
կան տնտեսությունները (ամենից առաջ՝ գյուղացիա-  
կան տնտեսությունները) միայն հետզհետե, յերբ  
նրանց կողեկանիվացման բոլոր ձեռները սիստեմատիկ  
կերպով ուժեղ աջակցություն կգտնեն պրոլետարա-  
կան պետության կողմից, նրանք կառնվեն արտա-  
դրության ու բաշխման ընդհանուր սոցիալիստական  
կազմակերպության մեջ։ Նրանց տնտեսական ձևերի  
ամեն տեսակի բռնի բեկումը և նրանց ստիպողական  
կողեկանիվացումը — կհասցնելին միայն բացասական  
հետևանքների»։

Դրան համապատասխան, ծրագիրը սահմանում ե,  
վոր նեպը (նոր տնտեսական քաղաքականությունը)  
հանդիսանում ե՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու  
պարտադիր ունիվերսալ ձև, նույն գլուխ յերրորդ պա-  
րագրաֆը՝ պրոլետարական դիկտատուրայի տնտեսա-  
կան քաղաքականության հիմունքների մասին՝ տալիս ե

հետեւալ զիրեկտիվը. — «մանր արտադրական միավորների (առաջին հերթին՝ գյուղացիական տնտեսությունների, ֆերմերների, արհեստավորների, մանր առևտրականների և այլն տնտեսությունները) բավականաչափ քանակի առկայությունը... անհրաժեշտ է դարձնում — զարգացման սկզբնական աստիճանների վրա — տնտեսական կապի բորսային ձևերի, փողային սիստեմի և այլն այս կամ այն չափով պահպանումը: Յերկրի ընդհանուր եկոնոմիայի մեջ վորքան ավելի յե մանր գյուղացիական բաժան-բաժան աշխատանքի տեսակարար կշռը, նույնքան ավելի յե բորսային հարաբերությունների ծավալը, նույնքան քիչ ե անմիջական պլանային ղեկավարության նշանակությունը, նույնքան ավելի մեծ չափով ե ընդհանուր տնտեսական պլանը հիմնվում տարերայնորեն դասավորվող տընտեսական հարաբերությունների նախատեսման վրա: Ընդհակառակը, վորքան ավելի քիչ ե մանր տնտեսության տեսակարար կշռը, վորքան ավելի շատ ե ընդհանրացած աշխատանքի բաժինը, վորքան ավելի զորեղ են արտադրության միջոցների կենարոնացվածու սոցիալականացված մասսաները, նույնքան պակաս ե բորսային հարաբերությունների ծավալը, նույնքան մեծ ե պլանի նշանակությունը, նույնքան ավելի նշանակալից են և ավելի ունիվերսալ են պլանային անմիջական ղեկավարության մեթոդները և արտադրության բնագավառում և բաշխան բնագավառում:

Այլպատով այդ սկզբունքների համար հիմք ե ընդունվում ընկ. Լենինի կոոպերատիվային պլանը՝ միջազգային մասշտաբով:

Մազմական կոմունիզմի վերաբերմամբ ծրագիրը այսպես ե արտահայտվում. — «ուազմական հավանական ինտերվենցիայի գեպօւմ կարող ե առաջ գալ ուազմակոմունիստական տնտեսական քաղաքականության («ուազմական կոմունիզմի») անհրաժեշտություն... «Մազմական կոմունիզմի» այդ քաղաքականությունը, նպաստելով պրոլետարական դիկտատուրայի ուազմական պայքարին և դրանում գտնելով իր պատմական հիմնավորումը, բայց և այսպես դա չպետք ե դիտվի վորպես պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական քաղաքականության «նորմալ» սիստեմ:

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՐԱԾԻ ՄԻՍՏԱՐՈՒԾԸ ՄԻՍՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը այնուհետև լենինի խոսքերով տալիս ե պրոլետարիատի դիկտատուրայի բնորոշումը («պրոլետարիատի դիկտատուրան — համառ պայքար ե, արյունալի և անարյուն» և այլն), բնութագրում ե պրոլետարիատի դիկտատուրայի հարաբերությունները զանազան դասակարգերի ու խմբերի նկատմամբ և ձևակերպում ե մասսայական կազմակերպությունները դերը պրոլետարական դիկտատուրայի սիստեմում: Ծրագիրը նաև վորոշում ե պրոֆեսիոնալ (արտադրա-

կան) միությունների խնդիրներն ու ֆունկցիաները, վորոնք — ըստ ծրագրի — պետք է դառնան պրոլետարախատի տնտեսական և ընդհանուր պետական կազմակերպությունների «գլխավոր հիմքը այն չափով, ինչ չափով վոր նրանք այդ աշխատանքի համար տալիս են ղեկավարող կադրեր, ինչ չափով վոր նրանք այդ աշխատանքի մեջ են մտցնում պրոլետարիատի լայն խավեր և ինչ չափով վոր նրանք իրենց նպատակ են դնում՝ պայքարել բյուրոկրատիկական այլանդակությունների դեմ, վորոնք անխուսափելիորեն առաջ են գալիս պրոլետարիատին ոտար դասակարգային հողի վրա և մասսաների դեռ ևս վոչ բավարար կուլտուրականության հետևանքով»:

Սպառողական կոռալերացիայի մասին ծրագիրը ասում է, վոր նա պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ պետք ե լինի բաշխման ապարատի կարեոր բաղկացուցիչ մասը:

Ծրագիրը առանձնապես կանդ և առնում գյուղատնտեսական կոռալերացիայի նշանակության վրա պրոլետարիատի դիկտատուրայի եպօխայում։ Այսուղի, մի անգամ ևս կերառելով ընկեր Լենինի կոռալերատիվային պլանը, ծրագիրը սահմանում է, վոր պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ, «ալլորետարիատի ուղիղ քաղաքականության դեպում... գյուղատնտեսական կոռալերացիան կոռականա կառնա գյուղի սոցիալիստական փոխակերպման, նրա կողեկատիվացման կարեռագույն լծակներից մեկը»։

Վերջապես, թվարկելով մասսայական կազմակերպությունները պրոլետարական դիկտատուրայի եպոխայում, ծրագիրը խոսում է կոմունիստական կուսակցության դերի մասին, կուսակցության, վորը իրականացնում է կամքի միասնականությունը և բոլոր պրոլետարական մասսայական կազմակերպությունների գործնեյության ղեկավարությունը, ծրագիրը խոսում է պրոլետարական դիկտատուրայի մասին, վորպես հիմնական պայմանի մասին, վորի դեպքում «պրոլետարիատը կարող լինի կատարել նոր հասարակության կազմակերպողի իր դերը»։

ՊԱՅՔԱՐ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱՇԽԱՅԻՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ  
ՀԱՄԲՈՐ, ՑԵՎ, ՑԵՐԿՎՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ

Ծրագրի չորրորդ հատվածը վերջանում է հետևյալ գլուխներով. 1) «Պայքար՝ պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի համար, և հեղափոխության հիմնական տիպերը», 2) «Պայքար պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի համար, և գաղութային հեղափոխությունները»։

«Պայքար պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի համար» գլուխը ծրագրի կենտրոնական կետերից մեկն է հանդիսանում։ Կոմինտերնի ծրագիրը կազմելու գլխավոր դժվարությունը կայանում եր նրանում, թե ինչպես պետք եր ամբողջացնել բանվորների, գյուղացիների և գաղութների ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարի ձևերի, մեթոդների ու ծրա-

գրների բազմազանությունը։ Ծրագիրը այդ հարցը լուծում է «Պայքար պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի համար» գլուխում։ Ծրագիրը սահմանում է, վոր «պրոլետարիատի միջազգային հեղափոխությունը կազմվում է զանազան ժամանակվա և զանազանակերպ պրոցեսներից — զուտ պրոլետարական հեղափոխություններից, բուրժուական դեմոկրատական տիպի հեղափոխություններից՝ վորոնք հետո վեր են ածվում պրոլետարական հեղափոխությունների, ազգային ազատազրական պատերազմներից, գաղութային հեղափոխություններից։ Հեղափոխական պրոցեսը ի վերջո հասցնում է պրոլետարիատի համաշխարհին դիկտատուրային»։ Պրոլետարիատի դիկտատուրային անցնելու պայմանների և ուղիների այդ զանազանակերպությունը ծրագիրը բաժանում է յերեք հիմնական տիպերի։ 1) բարձր զարգացած կապիտալիզմի յերկներ (Հ. Ամեր. Միացյալ Նահանգներ, Գերմանիա, Անգլիա և այլն), ուր հարկավոր ե ուղղակի անցնել պրոլետարիատի դիկտատուրային։ 2) կապիտալիզմի զարգացման միջակ մակարդակ ունեցող յերկրներ (Խաղանիա, Փորթուգալիա, Լեհաստան, Վենդիա, Բալկանյան Յերկրներ և այլն), — «այդ յերկրներից մի քանիսում հնարավոր ե բուրժուական դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերածելու քիչ թե շատ արագ պրոցես։ մյուսներում հնարավոր ե պրոլետարական հեղափոխությունների տիպեր, բայց այդտեղ մեծ տեղ

են բոնելու բուրժուական դեմոկրատական բնույթ ունեցող խնդիրներ. 3) գաղութային և կիսագաղութային յերկրները (Զինաստան, Հնդկաստան և այլն) և կախյալ յերկրները (Արգենտինա, Բրազիլիա և այլն)։ Այստեղ «կենտրոնական նշանակություն ունի պայքարը ֆեոդալիզմի դեմ, շահագործման կապիտալիստական ձևերի դեմ և գյուղացիության հետևզականորեն անցկացրած ազրարային հեղափոխությունը՝ մի կողմից, պայքարը ուսարյերկրյա իմպերիալիզմի դեմ ազգային անկախության համար՝ մյուս կողմից։ Պրոլետարիատի դիկտատուրային անցնելը այստեղ հնարավոր ե մի շարք նախապատրաստական աստիճանների միջոցով... մեծ մասամբ՝ ուղղակի պաշտպանություն ստանալով պրոլետարական դիկտատուրայի յերկրների կողմից»։ Ծրագիրը առանձնապես բացարում է գրությունը ավելի յետամնաց գաղութային յերկրներում (որինակ՝ Աֆրիկայի մի քանի մասերում), ուր համարյա չկամ կամ բոլորովին չկան, վարձու բանվորներ և ուր բնակչության մեծամասնությունը ապրում ե ցեղային կենցաղավարության պայմաններում։ Ծրագիրը սահմանում է, վոր «ազգային ազստամբությունը և նրա հաղթանակը այստեղ կարող են ճանապարհ բաց անել դեպի սոցիալիզմ, առանց անցնելու կապիտալիզմի ստաղիան, յեթե գործով մեծ ոգնություն ցույց տրվի պրոլետարական դիկտատուրայի յերկրների կողմից։ Այսուհետև ծրագիրը թվարկում է կոմունիստական ինտերնացիոնալի հիմնական անելիք-

Ները գաղութային և կախյալ յերկրներում, ընդզծելով, վոր յեղբայրական մարտական դաշինքը դադութային աշխատավորական մասսաների հետ... դա ամենագլխավոր խնդիրներից մեկն է համաշխարհային պրոլետարիատի, վորպես իմպերալիզմի դեմ մղվող պայքարի հեղեմոնի և ղեկավարի»:

### ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ ԴԻԿՏՈՒՐԱՆ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵջ

Ծրագրի հինգերորդ հատվածը նվիրված է պրոլետարական դիկտատուրայի յերկրների միությանը — ԽՍՀ Միությանը։ Ծրագիրը ԽՍՀՄ դիտում է միջազգային սոցիալիստական հեղափոխության շահերի տեսակետից։ Ծրագիրը սահմանում է, վոր ԽՍՀՄ «հանդիսանելով պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի շինարարության յերկիր, բանվոր դասակարգի հակայական նվաճումների յերկիր, բանվորների և գյուղացիների դաշինքի յերկիր, նոր՝ մարքսիզմի դրոշի տակ ընթացող՝ կուլտուրայի յերկիր, — անխուսափելի՝ որեն դառնում է բոլոր ճնշված դասակարգերի համաշխարհային շարժման բազա, միջազգային հեղափոխության հենակետ, համաշխարհային պատմության մեծագույն փակտոր։ ԽՍՀ Միության այս դերի տեսակետից ել ծրագիրը վորոշում է Համ. Կ. Կ. (բ) անելիքները։ Հակառակ իմպերիալիստների՝ ԽՍՀՄ ըրջապատելու սիստեմատիկ փորձերի, հակառակ ուղղմական ինտերվենցիաների որեցոր ավելացող վտանգների, ԽՍՀՄ պրոլետարիատը ինտերնացիոնալ պարտակա-

նությունն ունի պաշտպանություն ցույց տալու կապիտալիստական յերկրների բոլոր բանվորական շարժումներին, գաղութային ժողովուրդների ազատագրական շարժումներին, պաշտպանություն ցույց տալու ազգային ճնշման (ինչ ձեռվ ել վոր դա լինի) դեմ մղվող պայքարին։ Մյուս կողմից, ծրագիրը սահմանում է նաև՝ միջազգային պրոլետարիատի պարտականությունները ԽՍՀՄ նկատմամբ։ Ծրագիրը հայտարարում է, վոր միջազգային պրոլետարիատը, ԽՍՀՄ ունենալով իրեն միակ հայրենիք, իր նվաճումների կարևորագույն պատվարը և իր միջազգային ազատազրական ամենագլխավոր ֆակտորը, պարտավոր ե նպաստել ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության հաջողություններին և նրան ամեն կերպ պաշտպանել իմպերիալիստական պետությունների հարձակումներից։

### ԿՈՐԻ ՆՏԵՐՆԻ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ ԴԻԿՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ ՄՐԱՎՈՂ ՊԱՅԻՆ

Կոմինտերնի ծրագրի վերջին՝ վեցերորդ՝ հատվածը նվերված է կոմունիստական ինտերնացիոնալի ստրատեգիայի ու տակտիկայի հարցերին պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պայքարում։

Այդ հատվածը սկսվում է բանվորական շարժման մեջ գոյություն ունեցող՝ կոմունիզմին թշնամի իդեոլոգիայի մանրամասն բնութագրությամբ։ Ծրագիրը թվարկում է կոմունիզմին թշնամի հետևալ իդեոլո-

դիաները. — 1) իմպերիալիստական պետության գրլիսավոր զենքերը, դպրոցը մամուլը, թատրոնը, յեկեղեցին, — վորոնց ազդեցությունը անդրադառնում ե բանվորական դասակարգի մեջ գոյություն ունեցող կոնֆեսիոնել և ուժորմիտական շարժումների վրա ու գլխավոր արգելք ե հանդիսանում սոցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարում։ Կոնֆեսիոնել, կրօնական շպարով պատած (այսինքն տերտերների և դրանց նմանների ղեկավարության տակ գտնված) ուղղությունները իրենց արտահայտությունն են գտնում կոնֆեսիոնել (կաթոլիկ, բողոքական և այլն) ալրոֆմիտությունների մեջ։ 2) ալրոֆմիտությունների Ամստերդամի ինտերնացիոնալի և Ամերիկայի աշխատանքի ֆեդերացիայի ուժորմիզմը։ 3) Սոց.-դեմոկրատիան՝ բուրժուական վերասերման իր բոլոր ձևերով — զերմանականը, կրօնատրուկտիվ սոցիալիզմը (Մակդոնալդ և լնկ.), այսպես կոչված «գիլդիական» սոցիալիզմը (Պենտի, Որաժ, Հոբասն), «կոոպերատիվիզմը» (Շարլ Ժիդ, Տուտույանց և լնկ.), վերջապես ավելի վտանգավորը — քանի վոր բուրժուազիայի շահերի պաշտպանությունը քողարկում ե ձախ հեղափոխական ֆրագներով — Ուտոպիանուերի ավատրումարքսիզմը, վորին հարում են նաև ոռւս մենշևիկները։ 4) Անարխիզմը և «հեղափոխական» սինդիկալիզմը, վորոնք համամիտ են քաղաքական կենտրոնական հարցում — դեպի պրոլետարիատի դիկտուտուրան ու դեպի ԽՍՀՄ ունեցած վերաբերմունքի

հարցում։ 5) Սունյաթսենիզմը Զինաստանում։ 6) Գանդիզմը Հնդկաստանում։ 7) Գարվիզմը Ամերիկայում (նեզրիտանական սիոնիզմի մի տեսակը)։ Այդ բոլոր հոսանքներին ծրագիրը հակադրում ե կոմկուսը. — «Կոմունիստական ինտերնացիոնալի պայքարը հոգուտ պրոլետարիատի դիկտուտուրայի, իր հաջողության համար պահանջում ե, վոր յուրաքանչյուր յերկրում լինին միաձույլ, կոիվսերում կոփված, դիսպիպինա ունեցող, մասսաների հետ ամուր կապված կոմկուսակցություններ»։ Ծրագիրը նիշում ե կոմկուսակցությունների հիմնական խնդիրները — թե նրանք ինչպես պետք ե վճռական ազդեցություն ձեռք բերեն բանվոր դասակարգի, գյուղացիության և գաղութների ճնշված ժողովուրդների մասսաների մեջ, իւնց նպատակ դնելով այդ մասսաներին դաստիարակելը և նրանց նախապատրաստելը մասսայական յելութների համար — զործադուլներ, դեմոնստրացիաներ, զինված ապստամբություններ ընդդեմ բուրժուազիայի պետական իշխանության։ Ծրագիրը մանրամասն կանգ ե առնում կոմունիստական կուսակցությունների անեմեների վրա՝ յերբ բացակայում ե հեղափոխական վերելք, և հեղափոխական վերելքների մոմենտներին, բացտարելով, թե ինչպես պետք ե ամեն մի առանձին դեպքում ոգտագործվեն մասսայական կազմակերպությունները, ինչպես պետք ե գործեն կոմկուսները՝ միասնական ֆրոնտի տակտիկայով, վորպեսզի շուտով և հաստատապես խախտեն կոմունիզմին թըշ-

նամի կազմակերպությունների ազդեցությունը և վճռողական մասսաներին մասնակից անեն հեղափոխական պայքարին։ Մասսայական աշխատանքը ծավալելու համար, ծրագիրը ընդգծում է, վոր անհրաժեշտ և ամենալուրջ ուշադրություն դարձնել այն հանդամանքի վրա, վոր պայքարին մասնակցեն թերանվորական և թե գյուղացիական յերիտասարդութան աշխատավոր կանայք։

ՊԱՅՔԱՐ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԾՈՒԹՅՈՒՆ  
Վ.ՏԱՆԴԻՆԵՐԻ ԴԵՐ

Վերջում ծրագիրը բոլոր կոմկուններից պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել՝ իմպերիալիստական պատերազմների վտանգների դեմ մղվող պայքարի սիստեմատիկ նախապատրաստության հարցերի վրա և հիշեցնում է, վոր «հեղափոխական աշխատանքի և հեղափոխական յելույթների համաձայնեցման, ինչպես նաև դրանք ավելի հաջողությամբ զեկավարելու համար, միջազգային պրոլետարիատը անհրաժեշտ է վոր ունենա միջազգային դասակարգային դիսցիպլինա, վորի կարևորագույն նախադրյալը հանդիսանում է կոմունիստական շարքերի դիսցիպլինան»։

Ծրագիրը վերջանում է կ. Մարքսի և Ֆ. Ենգելսի «կոմունիստական մանիֆեստի» ահեղ խոսքերով. — «կոմունիստները ավելուրդ են համարում թագունել իրենց հայացքներն ու դիտավորությունները։ Նրանք բացարձակ հայ-

տարարում են, վոր իրենց առաջադրած նպատակին կհասնեն ժամանակակից ամբողջ հասարակական իրավակարգը բռնությամբ խորտակելու ճանապարհով։ Թողի իշող դասակարգերը գողան կոմունիստական հեղափոխության հանդեպ։ Պրոլետարները նրանում կարող են կորցնել իրենց շղթաները միայն. իսկ ձեռք կը երեն—ամբողջ աշխարհը։ Պրոլետարներ բռնորդ յերկրների, միացեք»։

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՐՈԽԱՅԻ  
ՅԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

Կոմինտերնի ծրագիրը պետք է ուսումնասիրել կոմինտերնի Գործկոմի հաջկետու գեկուցումի (զեկուցեց ընկ. Բուխարինը) առթիվ հանած բանաձեի հետ միասին։ Այդ բանաձեը («միջազգային դրության և կոմունիստական ինտերնացիոնալի խնդիրների մասին») իր հերթին նույնպես հանդիսանում է կոմունիստական ինտերնացիոնալի ծրագիրը, սակայն այնպիսի ծրագիր, վոր կազմված է մոտակա ժամանակի համար։ Վեցերորդ կոնգրեսը, մանրամասն քննության առնելով միջազգային դրությունը (ընկ. Բուխարինի զեկուցման շուրջը արտահայտվեցին մոտ հարյուր ճառախոս), ներկա մոմենտը բնորոշում է վորպետ առաջարկությունը, որի համար պրոլետարական հեղափոխության յերրորդ շրջան, այդ հեղափոխությունը սկսվում է ուստական պրոլե-

սամարիատի 1917 թ. հաղթական ապստամբությամբ։ Բա-  
նաձեռ պրոլետարական հեղափոխության եպոխայի  
առաջին շրջանը սահմանում է 1917 թվից մինչև գերմա-  
նական հեղափոխության պատմությունը 1923 թ., յերկ-  
րորդ շրջանը սկսվում է 1923 թվից հետո, դա — ԽՍՀՄ  
տնտեսության վերականգնման և կապիտալիստական  
աշխարհի ստարիլիզացիայի շրջանն եւ յերրորդը —  
ներկա շրջանն եւ, յերբ կապիտալիզմի եկոնոմիկան  
նախապատերազմական մակարդակից անցնում է և  
համարյա միաժամանակ՝ այդ մակարդակից անցնում  
են նաև ԽՍՀ Միության եկոնոմիկան։

ԽՍՀՄ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ԵՊՈԽԾՅԻ ՅԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

Վերոնք են յերրորդ շրջանի բնորոշ գծերը, վոր  
կոմինտերնի ու նրա սեկցիաների առաջ կարևորա-  
գոյն խնդիրներ են դնում։

Պրոլետարական հեղափոխությունների եպոխայի  
յերրորդ շրջանը ԽՍՀ Միության նկատմամբ բնո-  
րոշվում է ԽՍՀ Միության հետագա զարգացումով  
և ամրապնդումով։ ԽՍՀՄ եկոնոմիկան հասնում ու  
անցնում է նախապատերազմական մակարդակից։ Ար-  
տադրական ուժերի այդ աճման հիման վրա, ԽՍՀՄ  
սկսում է սոցիալիստական սկզբունքներով հիմնական  
ուեկոնստրուկցիայի յենթարկել իր ամբողջ տնտեսու-  
թյունը։ Դրա հետ կապված, յերկրում ուժեղանում է  
տնտեսության սոցիալիստական սեկտորի դերն ու նշա-

նակությունը, և ընդհակառակը — թուլանում ե կա-  
պիտալիստական ելեմենտների նշանակությունը։ Տըն-  
տեսության սոցիալիստական սեկտորի ձեռք բերած  
հաջողությունները հնարավորություն են տալիս  
ԽՍՀ Միությանը արդեն այժմ բանվորների աշխա-  
տանքի պաշտպանության բնագավառում առաջ անց-  
նելու յելլոպական առաջավոր յերկրներից ու Ամերի-  
կայից և շարունակելու հետագա հաջող աշխատանքն  
այդ ուղղությամբ։ ԽՍՀ Միության այդ նվաճումները  
հսկայական ազիտացիոն, հեղափոխականացնող դեր  
են կատարում յելլոպական և (մասսամբ) Հ.Ամերի-  
կայի պրոլետարիատի շրջանում։ ԽՍՀՄ նվաճումները  
ազգային հարցի բնագավառում, մանավանդ արեել-  
յան յետամաց այն ժողովուրդների շրջանում, վո-  
րոնք մտնում են ԽՍՀՄ կազմի մեջ (թուրքմեններ,  
ուզբեկներ, չերքեզներ և այլն), — ել ավելի հեղափո-  
խականացնող դեր են կատարում գաղութային յեր-  
կրների արեելյան ժողովուրդների շրջանում։ Իմպե-  
րիալիմզի կողմից ճնշված լայն մասսաներին հեղափո-  
խականացնելու գործում աջակցում ե նաև այն սիս-  
տեմատիկ ու գործոն ոգոնությունը, վոր ԽՍՀՄ բան-  
վորների և գյուղացիների կողմից ցույց ե տրվում  
բոլոր հեղափոխական շարժումներին։ Այդ ամենը  
հսկայական չափերով մեծացնում ե վիճը ԽՍՀՄ  
և ամբողջ կապիտալիստական աշխարհի միջև։ — այդ  
ամենը, ուժեղացնելով ճնշվածների և շահագործ-  
վածների համակրանքը դեպի ԽՍՀՄ, միաժամանակ

ծայր աստիճանի ուժեղացնում ե բոլոր կապիտալիստական յերկրների իշխող դասակարգերի ատելությունը դեպի ԽՍՀՄ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԵՐՁԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱ-  
ՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՊՈԽԱՅԻ ՅԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ

Պրոլետարական հեղափոխությունների եպոխայի այդ յերրորդ շրջանը կապիտալիստական աշխարհի նկատմամբ բնորոշվում է, ամենից առաջ, նրանով, վոր կապիտալիստական աշխարհում եկոնոմիսական ստարիլիզացիայի պրոցեսները շարունակվում են: Այդ պրոցեսները ծավալվում են արտադրական պրոցեսների կապիտալիստական ռացիոնալիզացիայի հիման վրա: Խացիոնալացումը հսկայական չափերով զարգացրել ե աշխատանքի արտադրողականությունը (որինակ, Ամերիկայում 1923 — 1924 թթ. արդյունագործության ընդհանուր պրոդուկցիան ավելացել ե 4,5% այն ժամանակ, յերբ բանվորների թիվը պակասել ե ավելի քան 5%): Աշխատանքի արտադրողականության այդ հսկայական աճումը իմպերիալիզմին հնարավորություն տվեց նախապատերազմյան մակարդակից անցնելու, ուժերի արտադրողականության հենց այդ աճումը գոյություն ունեցող բուժուական պետությունների շրջանակներում անխուսափելիորեն տանում ե դեպի կապիտալիստական սխառադիմինչ այժմ չեղած խորը կրիզիսը: Այդ կրիզիսը ուժեղ թափով ծավալվում ե թե յուրաքանչյուր բուժուական

